

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՈՒՄՐՇԱՑՅԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

07.07.2015 17:10

2015 թվականի հուլիսի 6-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը քննելով քաղաքացի Էմմա Կիրակոսյանի դիմումի հիման վրա հարուցված թիվ ԿԳ-15021 կարգապահական գործը որոշել է կարգապահական պատասխանատվության ենթարկել ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արմեն Ումրշատյանին:

Փաստաբանը մեղավոր է ճանաչվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2., 3.1.8 և 3.5.5. ենթակետերի խախտումների համար, իսկ որպես տույժ փաստաբանների պալատի խորհուրդը որոշել է դադարեցնել փաստաբան Արմեն Ումրշատյանի թիվ 385 արտոնագրի գործողությունը:

*Ծանոթություն: Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Որոշումը օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```